

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱՊԱՐԱՆԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբան հայրերի ուղեկցությամբ մեկնեց Արագածոտնի թեմ՝ վերաօծելու Ապարանի Ս. Խաչ եկեղեցին:

4-րդ դարի բազիլիկ այս եկեղեցին ավերվել և չէր գործում խորհրդային տարիներից ի վեր: Այսօր եկեղեցին վերականգնվել է շնորհիվ սփյուռքահայ և հայաստանաբնակ մի շարք եկեղեցասեր բարերարների: Նրանց թվում են հալեպաբնակ տեր և տիկին Երվանդ և Ափրինե Շաքյանները, Լևոն և Մարի Նահիկյանները՝ Նիկոսիայից, հայաստանաբնակ Հովհաննես Մարգարյանը, Երվանդ Ֆրանգուլյանը, Վրեժ Մարկոսյանը և այլոք:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի վերաօծվեց եկեղեցու Ս. Մեղանը, ապա երկար տարիների ընդմիջումից հետո եկեղեցում վերստին մատուցվեց Ս. Պատարագ:

Եկեղեցու վերաօծման առիթով Նորին Սրբությունը շնորհավորեց բոլոր ներկաներին, իր գնահատանքը հայտնեց բարերարներին և բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել եկեղեցու վերականգնման աշխատանքներին: Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց նաև Ապարանի հավատավոր ժողովրդին՝ ասելով. *«Գիտեմ ականատես իմ ծնողներից, թե ինչպես խորհրդային տարիներին խոնարհվել է այս եկեղեցին, թե ինչպես եկեղեցու քահանաները ստալինյան բռնապետության տարիներին աքսորվել են և իրենց մահկանացուն կնքել հեռավոր Միբիրում, թե ինչպես նրանք, Ղևոնդյանց քահանաների ոգուն ու նկարագրին հավատարիմ, չեն ուրացել իրենց հավատքը և նախընտրել են մահն առավել, քան ուրացությունը Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի: Ահա այդ հավատով է կանգուն մնացել այս եկեղեցին 4-րդ դարից ի վեր: Այդ հավատքը պահել ու պահպանել է ձեզ և մշտապես ձեր ջանքերը, ճիգերը, պայքարն ու պատերազմները հաղթանակով պսակել»:*

Չնայած այն բանին, որ եկեղեցին երկար տարիներ մատնված է եղել անգործության, հավատավոր ապարանցիների համար այն մշտապես մնացել է որպես սրբազան աղոթատուն: Իսկ վերջին տասը տարիների ընթացքում Ապարանի հավատացյալ համայնքին հնարավորություն էր ընձեռվել ամեն կիրակի ներկա լինելու Սուրբ Պատարագի, որ մատուցվում էր օծյալ վեմ-քարի վրա:

Վերաօծված եկեղեցուն Վեհափառ Հայրապետը նվիրեց Ս. Հաղորդության սկիհ, որից Տիրոջ մարմնին ու արյանը կհաղորդվեն եկեղեցու հավատացյալները:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԵՂԵՓՈՒՄԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԿՆՈՋԻՆ ՀԱՆԴԵՍԱՎՈՐՎԵԼԸ ԱՆՀԱՄԲԵՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՂՕ ՊԱՐՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՈՒՄԸ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՆՍՔ
ԿՏԵՂԵԼԻԹԵ ՇՈՒՄ. Ս ՎԵՐՄՈՒՆ

Սրբազան արարողությանը ներկա էին Արագածոտնի մարզպետը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ: Եկեղեցու օծման առիթով Հայաստան էին եկել նաև տեր և տիկին Շաքլյանները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՕՐՀՆԵՔԸ

Մայիսի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրերի ուղեկցությամբ այցելեց Գուգարաց թեմ՝ կատարելու Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու հողօրհնեքը: Վեհափառ Հայրապետի շքախմբում էին նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի խումբ բարերարներ, որոնց թվում՝ կառուցվելիք եկեղեցու բարերարներ տեր և տիկ. Սարգիս և Հռութ Բեդևյանները, այս օրերին Մայր Աթոռում գտնվող տեր և տիկ. Չարլզ և Գրեյս Փինեճյանները, տիար Նուբար Ջեսուրյանը, տեր և տիկ. Ռոբերտ և Ջուլիետ Աբելյանները, Տ. Գառնիկ քահանա Հալաջյանը, անգլիաբնակ տեր և տիկ. Ջորջ և Դայանա Քյուրքջյանները:

Լոռու մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հ. Քոչինյանը, Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Վանաձորում Հայրապետական շքախմբին դիմավորեց հավատացյալների խանդավառ բազմությունը: «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Նորին Սրբությունն առաջնորդվեց քաղաքի այն վայրը, ուր առաջիկայում վեր է հառնելու առաջնորդանիստ շքեղ եկեղեցին:

Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հողօրհնեքի արարողություն, որից հետո Նորին Սրբությունը, թեմական առաջնորդն ու Վեհափառ Հայրապետին ուղեկից բարերարները բահերի առաջին հարվածներով ազդարարեցին եկեղեցու կառուցման հողային աշխատանքների սկիզբը:

Հողօրհնեքի առիթով Վեհափառ Հայրապետին ու հավատացյալ ժողովրդին գոհաբանական ու երախտիքի խոսք հղեց թեմական առաջնորդը: Սեպուհ Սրբազանը շնորհակալանքի մասնավոր խոսք հղեց տեր և տիկ. Բեդևյաններին, որոնց նյութա-

կան ու բարոյական աջակցությամբ Վանաձորում հիմնվելու է նաև Հայորդյաց տուն, առողջապահական կենտրոն և բարեգործական ճաշարան:

«1918 թ. մայիսյան այս օրերն էին, երբ Ղարաքիլիսայի ձեր հայրերն ու մայրերը կանգնած էին այստեղ հայրենյաց սրբազան մարտը մղելու, հայրենի հողը պաշտպանելու: Իսկ այսօր Աստված մեզ առաջնորդել է այստեղ մեր բարերար զավակների հետ, որպեսզի այս հողի մեջ թափված արյամբ շաղախ դարձնենք նաև մեր աղոթքն ու օրհնությունը, որպեսզի նվիրագործված այս հողի վրա վեր հառնի սրբազնասուրբ եկեղեցին հայոց, որ ինչպես այն օրերին, այնպես էլ մեր գոյության ողջ ընթացքին պահել, պահպանել ու այսուհետ էլ պիտի պահի ու պահպանի մեր բարեպաշտ ժողովրդին ու հող հայրենին»,- հայրապետական իր խոսքը ուղղելով վանաձորցիներին ասաց Հայոց Հայրապետը՝ վստահությամբ, որ նոր եկեղեցու օրհնության ներքո բարեպաշտ վանաձորցին առավել ևս նախանձախնդիր կլինի իր հայրերի հավատքի զորացմանը:

Արարողության ավարտին Նորին Սրբությունը հայրապետական իր շքախմբով այցելեց Վանաձորի թիվ 6 միջնակարգ դպրոց, ուր կատարվեց դպրոցականների նկարչական ցուցահանդեսի բացումը:

Այստեղից շքախումբն ուղևորվեց Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր համատեղ աղոթքից հետո Նորին Սրբությունը ականակուռ լանջախաչ շնորհեց Տ. Գառնիկ քահանա Հալաջյանին՝ ի գնահատություն Հայ Եկեղեցուն բերած երկարատև ու նվիրյալ ծառայության:

Նույն օրը Հայոց Հայրապետը եղավ նաև թեմի առաջնորդարանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՆԱՁՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՕՐՀՆԵՔԻՆ ՀԱՎԱՔՎԱԾ
ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՐ ՊԱՏԳԱՄՆ Է ՀՂՈՒՄ

ਪ੍ਰਮੁਖਾਂਚ ਪ੍ਰਾਪਤਾਂਤਾਂਪਾਰਾਂਨਾਂਪਾ ਪਾਰਕ
ਤਰਾਂ ਪੰਜਾਬਾਂਸਾਰਾਂਚ ਪੇਂਡਾਂਪਾਰਾਂਨਾਂਪਾ ਪਾਰਕ ਬਾਰੇ ਪੰਜਾਬਾਂਤਾਂਪਾਰਾਂਨਾਂਪਾ ਪਾਰਕ ਦੇਸ਼ਾਂਤਾਂਪਾਰਾਂ ਪੇਂਡਾਂਪਾਰਾਂਨਾਂਪਾ ਪਾਰਕ ਪੇਂਡਾਂਪਾਰਾਂ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը «Երգիչներ» ազգային
փառատոնի մասնակիցներին ողջունում է Հանրապետական հրապարակում